Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան
Ուսուցիչ՝ Սուսաննա Գյարզոյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում
3. Միջառարկայական կապ, որ ներառվում է նախագծային աշխատանքում
4. Եզրակացություն
5. Առաջարկություն
6. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցման հիմնական խնդիրն է զարգացնել սովորողների լեզվագործածական ունակությունները՝ հասարակական կյանքում լիարժեք, ճիշտ, մաքուր, անաղարտ մայրենիով հաղորդակցվելու նպատակով: Այս իմաստով մայրենիի ուսուցումը արդիական է ու կարևոր: Մայրենի լեզուն դպրոցական կրթության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում, քանզի այն միաժամանակ և՛ ուսումնասիրության առարկա է, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց: Այս իմաստով կրկնակի կարևորվում է մայրենիի դերը, դառնում ավելի արդիական: Մայրենի լեզվի՝ որպես դասավանդման առարկայի, մյուս յուրահատկությունն այն է, որ նա ներառում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացություն, այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի (տարբեր առարկաներից) գրավոր և բանավոր շարադրանք ստեղծելու և լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է տեսական լեզվաբանական գիտելիքներ:

Թեմայի արդիականությունը

Պետական կրթական չափորոշիչները պահանջում են կրթության և դաստիարակության ներդաշնակ զուգակցում, սովորողների զարգացման և բարեկրթության մակարդակի բարձրացում, աշակերտների ստեղծագործական մտածողության, գիտելիքների համալրման կարողության ձևավորում:

Քերականության ուսուցումը պետք է հանգեցնի ոչ թե քերականական կանոնները, սահմանումները, հոլովման և խոնարհման հարացույցները անգիր անելուն, այլ քերականական ձևերը խոսքում ճիշտ և նպատակասլաց կիրառելուն ոչ միայն մայրենիի դասերին, այլ դասավանդվող մյուս առարկաների ժամերին ևս:

Օտարամուտ բառերի, բառակապակցությունների ու դարձվածքների գործածության մերօրյա հեղեղի մեջ ավելի քան արդիական է մայրենիի, միջառարկայական կապի, խոսքային կարողությունների ճիշտ ու հմուտ կիրառությունը: **Հետազոտական աշխատանքի նպատակն է** խթանել միջառարկայական կապերի օգտագործմամբ հայոց լեզվի և գրականության դասերի անցկացումը և նպաստել առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացմանը հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Այսօրվա հանրակրթական դպրոցի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն այն է, որ ուսուցումը լինի աշակերտակենտրոն, ուրեմն ուսուցիչը, տարբեր մեթոդներ գործադրելով, պետք է բարձրացնի աշակերտի գործունեությունը դասերին, ոգևորի երեխաներին: Նա պետք է աշակերտներին տրամաբանելու և ստեղծագործելու հնարավորություն տա: Այստեղ նրան մեծապես կօգնեն ուսուցման և արտաուսումնական աշխատանքների ընթացքում (հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, էքսկուրսիաներ, կինոդիտումներ, ցերեկույթներ և այլն) իրականացվող միջառարկայական կապերը:

Միջառարկայական կապերի իրականացումը միշտ էլ ուսուցման բարելավման կարևոր միջոց է: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ ու խոր յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի երեխաների համար: Դասը դառնում է ավելի հագեցած, հետաքրքիր, խնդիրները լուծվում են սեփական ինտելեկտը գործի դնելու միջոցով:

Հետազոտական աշխատանքի խնդիրները

Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում կարող է որոշակի խնդիրներ առաջացնել:

Միջառարկայական կապերի հաստատումը նախ և առաջ թելադրում է ճիշտ սահմանել և ճիշտ ու բազմակողմանի ուսումնասիրված կապ ստեղծել մյուս առարկաների հետ : Կիրառել տարբեր մեթոդներ, մշակել հարցեր, որոնք կնպաստեն սովորողների հետաքրքրությունների խթանմանը:

Ամրապնդել ինքնուրույն, գործընկերների և սովորողների հետ ուսումնամեթոդական նյութեր մշակելու, դրանք վերլուծելու, ներկայացնելու, գնահատելու, սովորողների ուսումնական դրդապատճառները խթանելու կարողությունները:

ՏՀՏ-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը. Նա դառնում է սովորողի գործընկերը:

Անհրաժեշտ խնդիրներից է էլէկտրոնային գրադարանների, ուսումնական զանազան նյութերի և միջոցների ստեղծումը:

Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում

Մանկավարժական առաջավոր փորձով ապացուցված է, որ ուսուցման ընթացքում միջառարկայական և ներառարկայական կապերի բացահայտումն ու ապահովումը նպաստում են աշակերտների ստեղծագործական հնարավորությունների զարգացմանը, նրանց մտավոր գործունեության ակտիվացմանը, բանավոր ու գրավոր խոսքի կատարելագործմանը, ինչպես նաև դասը դարձնում են առավել հետաքրքիր, հագեցած, ինչը զարգացնում է սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն դրսևորման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացմանը:

Միջին դպրոցում կարևոր է սովորողների որոնողական-հետազոտական գործունեության, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների և ինքնուրույնության զարգացումը:

Թե՛ ճանաչողական, թե՛ դաստիարակչական նշանակություն ունեցող ուսուցումը սովորողներին լայն հնարավորություն է ընձեռում խորանալու ուսուցվող երևույթների էության մեջ, պարզելու տարբեր առարկաների միջև գոյություն ունեցող միջառարկայական և միևնույն առարկայի ներառարկայական կապերը:

Ժամանակակից դպրոցի կրթադաստիարակչական բովանդակության հիմքում աշխարհի հակադրամիասնության գաղափարը, որը հիմնավորվում է բնության և հասարակության մի շարք ընդհանրական օրենքներով: Բնության և հասարակության գոյություն ունեն ոչ միայն ներդաշնակություն, այլև բախումներ, հակադրություններ, ոչ միայն պայքար, այլև համագործակցություն:

Թե՛ բնական և թե՛ հասարակական երևույթները միասնական ու ամբողջական են և գտնվում են փոխազդեցության փոխկապակցության գործընթացում:

Կրթության գործընթացում, եթե տարբեր առարկաներ ուսումնասիրվեն մեկուսի, չբացահայտվեն ներքին տրամաբանական կապերը, ապա ուսուցումը կլինի թերի և շատ հարցեր կմնան չբացահայտված և անպատասխան: Այս իմաստով սերտորեն փոխկապակցված են <<գրականություն>> ու <<հասարակագիտություն>>, <<գրականություն>> ու <<կենսաբանություն>> կամ <<բնագիտություն>> առարկաները: Չէ՞ որ շատ կերպարներ վերլուծելիս կամ գրողի կյանքն ու ստեղծագործական ուղին

ուսումնասիրելիս նախ պետք է ներկայացնել ժամանակաշրջանը, քաղաքական իրավիճակը: Սովորողը լիարժեք պատկերացում չի ունենա Չարենց-բանաստեղծի կամ Չարենց-քաղաքացու, այդպես էլ Սևակի, Բակունցի, Շիրազի, Մահարու և ուրիշների մասին, եթե գաղափար չունենա ստալինյան բռնատիրության կամ խորհրդային կաղապարված ռեժիմի մասին:

Կիրառելով միջառարկայական կապերը՝ սովորողները ոչ միայն ըմբռնում են տվյալ առարկայի բովանդակությունը կազմող գիտելիքներն ու հիմնական գաղափարները, այլև ընդհանուր պատկերացում են կազմում բնության ու հասարակության, ռեալ իրականության վերաբերյալ, ձեռք են բերում ստեղծագործելու, մտավոր աշխատանք կատարելու փորձ, ձևավորվում է նրանց աշխարհայացքը, կարողանում են կողմնորոշվել մասնագիտության ընտրության, հասարակության մեջ իրենց դերի, տեղի ու պատասխանատվության հարցերում:

Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում: Դասի ժամանակ կամ նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երեք տարբեր պահերի՝ նայած անհրաժեշտության և նյութի բնույթի.

1. Ուսումնասիրության նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների և այլ գիտությունների տվյալները նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման համար:
2. Նյութի մշակման ժամանակ, երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կոմից, կարելի է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միտքն ավելի պարզ, գաղափարներն ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար: Այսպիսի օժանդակ կամ լրացուցիչ փաստարկումներ աշակերտներից պետք է պահանջել նաև նրանց պատասխանելու ժամանակ, որը շատ կարևոր է ոչ միայն նյութը խոր

յուրացնելու, այլև ինքնուրույն եզրակացությունների հանգելու կարողություն մշակելու տեսակներից:

3. Ամփոփման ժամանակ լայնորեն կարելի է դիմել միջառարկայական կապերի օգտագործմանը՝ կատարելով հեռավոր կամ կողմնակի էքսկուրսիաներ, որոնք թույլ են տալիս ազատ դատողություններ անել՝ առանց բուն նյութից շեղվելու, որովհետև այդ դեպքում ընդհանուրը նկատի ունեք և ոչ թե կոնկրետ նյութը: Կարծում եմ՝ միջառարկայական կապերի այսպիսի օգտագործում ավելի շատ աշակերտների կողմից պետք է կատարվի:

Մայրենի լեզուն իր մեջ ամփոփում է գրեթե բոլոր աշխարհաճանաչողական տեղեկություններն ու գիտելիքները և դրանց փոխանցման ամենահիմնական միջոցն է:

Մայրենիի ժամերին՝ սկսած տարրական դասարաններից, ոչ միայն դրվում են բոլոր գիտելիքների հիմքերը, այլև ձևավորվում են բոլոր կարևոր ու մարդու համար կենսականորեն անհրաժեշտ կարողությունները: Առանձնապես մեծ է միջառարկայական կապերի օգտագործման դերը աշակերտների աշխարհայացքի, մտածողության և ընդհանրապես աշխարհընկալման ձևավորման գործում: Երեխաների ընդհանուր զարգացումն ու բարձր ինտելեկտը ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու, խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ պետք է տալ: Իսկ դրա համար մայրենի լեզվի դասը պետք է դարձնել ճանաչողական ու դաստիարակչական: Ահա այստեղ ուսուցչին օգնության են գալիս միջառարկայական կապերը: Այս առումով մայրենի լեզվի դասերը կարելի է դարձնել հարուստ, բազմակողմանի ու բազմաբնույթ, աշակերտներին գաղափար տալ արվեստի տարբեր ձևերի, տարբեր գիտությունների մասին՝ դրանով իսկ նպաստելով դասի լիարժեքության բարձրացմանը, աշակերտների համակողմանի զարգացմանը:

Այսպես օրինակ՝ վեցերորդ դասարանում մայրենիի դասերն առանց միջառարկայական կապերի կլինի միակողմանի և թերի:

Օրինակ՝ Մարտիրոս Սարյանի <<Գրառումները իմ կյանքից>>, Վիգեն Խեչումյանի <<Գլուխգործոց>> նյութերն անցնելիս, եթե կապ չստեղծվի կերպարվեստի հետ, աշակերտը լիարժեք պատկերացում չի կարող կազմել, իսկ տեղեկատվությունն էլ կլինի թերի:

Կամ Համո Բեկնազարյանի <<Հուշեր կինոդերասարնի և կինոռեժիսորի>> նյութը աշակերտին պետք է տեղափոխի կինոաշխարհ՝ տեղեկություններ հաղորդելով թե՛ հեղինակի, թե՛ նրա արվեստի մասին:

Շառլ Ազնավուրի <<Ազնավուրը Ազնավուրի մասին>> նյութը սերտորեն կապ է ստեղծում թե՛ երաժշտության, թե՛ կինոարվեստի հետ:

Աղասի Այվազյանի <<Պոեմ վասն շենքի և շինության>>, Անահիտ Պարսամյանի <<Իմ քույր խաչքար>>, Համո Սահյանի <<Ուր որ նայում ես>>, Վահագն Դավթյանի <<Զվարթնոցի արծիվը>> նյութերն անցնելիս ուղղակի հրամայական պահանջ է կապ ստեղծել ճարտարապետության հետ: Ընդհանրապես գրականությունն ու արվեստը այնքան սերտորեն են կապված, մեկն առանց մյուսի գնահատել և արժևորել դժվար է: <<Նոյ նահապետի տապանը Արարատի վրա>> կամ աստվածաշնչյան առակների ուսուցումը չի կարող ունենալ ո՛չ ճանաչողական և ո՛չ էլ դաստիարակչական նշանակություն առանց կապ ստեղծելու <<Աստվածաշնչի>> և քրիստոնեական գաղափարների հետ:

Վեցերորդ դասարանում <<Հայրենի բնաշխարհ>> խորագրի տակ կան մի քանի նյութեր՝ Սիլվան Կապուտիկյանի <<Մասիսին մոտիկ>>, Վաղթանգ Անանյանի <<Սևանա լիճ>>, <<Սևանա լիճ (ըստ հանրագիտարանի)>>, Մարգո Ղուկասյանի <<Ուր է կղզյակն Սևանա>>, Ստեփան Կուրտիկյանի <<Գեղամա լեռներ, Գեղամա ծով>>, Մուշեղ Գալշոյանի <<Կռունկ>>, Վահագն Դավթյանի <<Լիճը>>, որոնք աներկբայորեն կապ են ստեղծում աշխարհագրության հետ: Ի դեպ աշխարհագրության և գրականության միջև միջառարկայական կապը չափազանց սերտ է նաև յոթերորդ և ութերորդ դասարանների նյութերն ուսումնասիրելիս:

Այսպես՝ գրողներից քանի՞- քանիսի կյանքն է առնչվում հարևան Վրաստանի Հանրապետության հետ: Սայաթ-Նովա, Գաբրիել Սունդուկյան, Հովհաննես Թումանյան, Ռաֆֆի, Ղազարոս Աղայան և շատ ուրիշներ: Այսօր էլ Թիֆլիսում պահպանվում է հայկական թատրոնը, լույս է տեսնում հայերեն թերթ, գործում են հայկական եկեղեցիներ, հայկական դպրոց: Թիֆլիսի Խոջավանքի գերեզմանատանն իրենց վերջին հանգիստն են գտել նշանավոր հայ գրողներից շատերը:

Գրականության և աշխարհագրության միջև առանց միջառարկայական կապի լիարժեք և հիմնավոր տեղեկատվությամբ դաս չի լինի <<Միքայել Նալբանդյան>> և

<<Ռափայել Պատկանյան>> թեմաներն անցնելիս: Ավելին՝ Միքայել Նալբանդյանի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելիս հարկ է ստեղծել աշխարհագրություն-գրականություն-երաժշտություն եռաստիճան կապ:

Ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան գրականություն ուսումնասիրելիս դարձյալ կապ կստեղծվի աշխարհագրության հետ: Թե՛ Եվրոպան, թե՛ արևելքի երկրները, թե՛ Ամերիկան և թե՛ Ռուսաստանը այս կամ այն չափով առնչվում են գրողների կյանքի, ուսումնասիրության, գործունեության հետ, հետևաբար անխուսափելի է միջառարկայական կապը:

Սերտ է միջառարկայական կապը երաժշտության և գրականության միջև: Սկսած Շնորհալու շարականներից՝ մինչև Սայաթ-Նովա, Չարենց, Թումանյան, Տերյան, Իսահակյան, Մեծարենց և ուրիշներ ստեղծագործությունների մեծ մասը դարձել են երգեր: Իսկ այսօրվա տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս այդ երգերը լսել դասաժամին, իմանալ նրանց ստեղծման դրդապատճառներն ու պատմությունները, տեղեկատվություններ ստանալ կոմպոզիտորի մասին:

Հայ մեթոդական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվել նկարների օգտագործմանը մայրենի լեզվի դասերին: Դրանց անհրաժեշտությունը բացատրվում է երկու նպատակով, որոնք գրեթե հավասարապես անհրաժեշտ են: Դրանք են գեղագիտական ճաշակի ձևավորումը և խոսքի զարգացումը, որոնք այսօր էլ մայրենի լեզվի ուսուցման հիմնական խնդիրներն են: Ընդհանուր դասագրքում օգտագործվող նկարները լինում են երեք տեսակ՝ առարկայական կամ նկար-բառեր, նկար-նախադասություններ և նկար-պատմություններ, որոնց ուսուցիչը պետք է շունչ ու լեզու տա, գործադրի տեղին ու ժամանակին: Դասագրքերում զետեղված նկարները պետք է խորապես գեղարվեստական, գրավիչ ու ճաշակով լինեն, բավարարեն ժամանակի գեղագիտական պահանջը, լինեն մատչելի, բնական և երևակայությունը զարգացնող:

Բավականաչափ շատ նկարներ կան նաև մայրենի լեզվի գրքերում, որտեղ դրանք երբեմն նյութի այս կամ այն կարևոր փուլի գեղազարդում են կամ նյութականացում, իսկ երբեմն էլ որպես գեղարվեստական նկարների վերարտադրություններ, որոնց նպատակը գեղարվեստական ճաշակի մշակումը, կերպարվեստի նշանավոր գործիչների ու նրանց գործերի մասին մատչելի տեղեկությունների հաղորդումն է: Մայրենիի դասագրքերում որոշակի նյութեր կան նաև կերպարվեստի հայ նշանավոր գործիչների՝ Գևորգ

Բաշինջաղյանի, Հովհաննես Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի մասին: Այս նյութերն ուսումնասիրելիս կարելի է և պետք է տեղեկություններ տալ ոչ միայն արվեստի այդ խոշոր գործիչների, այլև դեպի արվեստի անսպառ ու անսահման աշխարհ տանող կերպարվեստի ինքնատիպ ճանապարհի մասին:

Բացի վերը նշված առարկաներից կարևոր է նաև այլ միջառարկայական կապերի օգտագործումը մայրենի լեզվի դասերին: Դրանք են, օրինակ, խոսքարվեստը, թատերական արվեստի տարրերը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, տեխնիկան:

Գեղարվեստական ընթերցումը ոչ միայն նոր նյութի հաղորդման, այլև սովորած նյութի հարցման ժամանակ գնահատման հիմնական չափանիշ պետք է դառնա, որովհետև ընթերցումից պարզ է դառնում, թե որքանով է նյութը յուրացվել, ինչ հույզեր, ապրումներ, զգացմունքներ են դնում իրենց կարդացածի մեջ, իսկ այդ ամենը ոչ միայն լավ կարդալիս հստակորեն դրսևորվում է, այլև կրթում ու դաստիարակում է երեխային՝ իր դրական ու բացասական հույզերով ու ապրումներով:

Մայրենի լեզվի դասերին օգտագործվում են նաև թատերական արվեստի որոշ տեսակներ: Դերերով կարդալը և նյութի բեմականացումը, ըստ էության, թատերական արվեստի ամենապարզ և մատչելի ձևերն են:

Հանրակրթական ոլորտում պետական քաղաքականության սկզբունքը ապահովում է հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը, ստեղծագործական աշխատանքի խթանումը: Այս առումով կարևորվում են նորագույն պահանջները՝ նախագծային աշխատանքները, ինչը խթանում է սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, ՏՀՏ-ի օգտագործման ունակությունների զարգացմանը և, իհարկե, ապահովում է նաև միջառարկայական կապը:

Միջառարկայական կապ, որ ներառվում է նախագծային աշխատանքում

Գևորգ Էմինի <<Պատգամ>> բանաստեղծությունը անցնելիս կարելի է հանձնարարել նախագծային աշխատանք, ինչը իր մեջ ներառում է թե՛ ճանաչողական, թե՛ դաստիարակչական արժեք: Այն նվիրված կլինի Հայաստանի ճանապարհներին (<<նեղ են ճամփեքը լեռնական>>).



Պրակտիկ գործունեությունը, անշուշտ, կնպաստի նորանոր մտահղացումների իրականացմանը, հայրենի երկրի նկատմամբ կխորացնի սերը, նրա տերն ու պաշտպանը դառնալու ձգտումը, բարեկարգ ու բարգավաճ երկիր ունենալու և այն պահպանելու վճռականությունը:

Միջառարկայական կապ ստեղծելու նպատակով առարկայի հետ առնչվող նյութը աշակերտը պետք է նախօրորք սովորած, յուրացրած լինի համապատասխան առարկայից, հակառակ դեպքում նա չի կարող ապահովել միջառարկայական կապ:

Դիցուք ուսուցանվում է ածական անունը: Աշակերտները նախապես գրականությունից սովորել են մակդիրը, որը գեղարվեստական ստեղծագործության մեջ գործ է ածվում որպես առարկան կամ երևույթը գեղարվեստորեն բնորոշելու և խոսքը

հուզական ու պատկերավոր դարձնելու միջոց, գիտի նաև, որ որպես մակդիր հիմնականում գործ են ածվում ածականները, ուստի ոչ թե նորից պետք է բացատրել <<մակդիր>> հասկացությունը, այլ հանձնարարել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման միջոցով կորոշվեն աշակերտների կարողությունները՝ տարբեր առարկաներից ստացած գիտելիքների արդյունավետ կիրառման գործում, մասնավորապես՝ հայոց լեզվի և գրականության: Օրինակ՝ Ավետիք Իսահակյանի <<Արագածին>> բանաստեղծությունը լեփ-լեցուն է մակդիրներով (ալմաստ վահան, բյուրդ վրան, լճակները՝ լույս-փերուզ և այլն), որոնցից շատերը ոչ թե ածականներ են, այլ գոյական:

Այսպիսով՝ և՛ ապահովվում է միջառարկայական կապը, և՛ գեղարվեստորեն վերլուծվում է բանաստեղծությունը, և՛ նկարագրվում Արագած լեռը, և՛ զարգանում գեղագիտական ճաշակը:

Հայ քնարերգության լավագույն նմուշները հարուստ են մակդիրներով, փոխաբերություններով, համեմատություններով և պատկերավորման այլ միջոցներով: Եթե բանաստեղծությունից դուրս են գրում մակդիրները, դրան հետևում է դրանց հոմանիշներն ու հականիշները գտնելը, խոսքի մեջ օգտագործելը: Ինքնին կապ է ստեղծվում մայրենի լեզվի և գրականության միջև:

Կամ թվականը, առավել ևս կոտորակային թվականները ուսումնասիրելիս ինքնըստինքյան կապ է ստեղծվում մաթեմատիկայի հետ:

Հայոց լեզվի դասերին կազմված նախադասությունների միջոցով կարելի է միջառարկայական կապ ստեղծել ցանկացած առարկայի հետ: Դրանով և՛ նյութը լավ կյուրացվի, և՛ կմեծանա աշակերտի ճանաչողական աշխարհը: Այսպես բացահայտչի մասին գաղափար կազմելիս կարելի է տալ նախադասություններ, որոնք կզարգացնեն որոնողական հետաքրքրությունը, կօգնեն կազմել բազմաբովանդակ ու գեղեցիկ նախադասություններ:

Օրինակ՝ Լեհ մաթեմատիկոսը՝ Մարի Կյուրին, սովորել է Սորբոնի համալսարանում: Աշխարհահռչակ ֆիզիկոսի՝ Իսահակ Նյուտոնի մասին զարմանալի լեգենդներ են պատմում: Աշխարհի ամենամեծ անապատի՝ Սահարայի սահմանները գնալով մեծանում է: Որպես բազմափորձ ֆուտբոլիստ՝ շատ սիրված ու ճանաչված էր Հովիվյանը:

Այսպիսով՝ մի դասի ընթացքում կապահովվի միջառարկայական կապ մի քանի առարկաների միջև:

Եթե որոշ առարկաների հետ միջառարկայական կապ ստեղծվում է ժամանակ առ ժամանակ, ապա չափազանց սերտ է կապը հայոց եկեղեցու պատմության, հայոց պատմության և գրականության միջև:

Հայ գրականության նախագրային շրջանն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումնաբանությունն ու պատմական զարգացումը: Այս ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է իր դիցաբանությունը և օրհներգներ նվիրել իր աստվածներին: Ստեղծվել է նաև սեպագիր ժառանգություն, առասպելներ, Գողթան երգեր: Ապրել և արարել են Արտաշես Ա հայոց թագավորի որդի բանաստեղծ Վրույրը, Տիգրան Մեծի որդի Արտավազդ Բ-ն, ով գրել է ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր: Արտաշատի, Տիգրանակերտի թատրոններում բեմադրվել են ողբերգություններ, այդ թվում հույն թատերագիր Եվրիպիդեսի <<Բաքոսուհիները>>: Այս տեղեկատվությամբ սերտ կապ է ստեղծվում հայ ժողովրդի պատմության և գրականության միջև:

Հինգերորդ դարի պատմագրությունը՝ Ագաթանգեղոսի, Եղիշեի, Բուզանդի, Փարպեցու և Խորենացու պատմությունները և հայոց պատմությունը գրեթե նույն տեղեկատվությամբ են հարստացնում աշակերտների գիտելիքները:

Կամ օրինակ՝ հայոց եկեղեցու պատմությունը կաթողիկոսների ժամանակագրության մեջ հիշատակում է անուններ, որոնք կա՛մ պատմիչ են, կա՛մ բանաստեղծ (Հովհաննես Դրասխանակերտցի, Ներսես Շնորհալի և ուրիշներ): Այստեղ ևս միջառարկայական կապը դառնում է հրամայական պահանջ:

Ժողովուրդների կյանքում եղել են պատմական դեմքեր, որոնք հսկայական դեր են ձեռք բերել տվյալ ազգի գրականության և պատմության շրջադարձային փուլերում: Վարդան Մամիկոնյանի կերպարն իր ուրույն տեղն ունի հայ ժողովրդի դարավոր պատմության և գեղարվեստական մտքի ամենատարբեր դրսևորումներում: Հարցի պատմությունն աննախընթաց է նաև ժամանակագրական առումով: Սկիզբ ունենալով Եղիշեի պատմությունը՝ Վարդան Մամիկոնյանի կերպարը ծավալում և իր շարունակությունն է գտնում շուրջ 15 դարերի ընթացքում հայ գրողների ստեղծագործություններում: Ներսես Շնորհալի <<Նորահրաշ պսակավոր>>, Ղևոնդ Ալիշյան <<Պլպուլն Ավարայրի>>, Մկրտիչ Պեշիկթաշլյան <<Ի նահատակության

Վարդանանց>>, Ռափայել Պատկանյան <<Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը>>։ Սրանք ստեղծագործություններ են, որոնց յուրացումը ուղղակի հնարավոր չէ առանց հայոց պատմության հետ անմիջական կապ ստեղծելու։

Հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական դեպքերը՝ Մեծ եղեռնը, հայկական ջարդերը, օտար հորդաների արշավանքները մեծ տեղ են զբաղեցնում գրականության մեջ, որոնց ուսումնասիրելու, յուրացնելու համար դարձյալ պետք է դիմել միջառարկայական կապին, առանց որի հնարավոր չէ նյութը կամ հեղինակի կյանքն ու ստեղծագործական ուղին բազմակողմանի և ճիշտ ներկայացնել։ Օրինակ Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի կյանքն ու ստեղծագործական ուղին ուսումնասիրելիս կամ Ռաֆֆու <<Խենթը>> վեպն ծանոթանալիս պետք է սկսել պատմական ժամանակաշրջանից, ինչը դարձյալ անդրադարձ է դեպի հայոց պատմություն։

Այսպիսով՝ արդի պետական չափորոշիչների պահանջով ժամանակակից դասը պետք է կառուցել՝ ապահովելով միջառարկայական կապ։ Վերջինիս նպաստում են նաև ոչ միայն դասապրոցեսները, այլև արտադպրոցական միջոցառումները՝ գրական-երաժշտական ցերեկույթները, հանդիպումները, վիկտորինաները, գրքերի քննարկումները, ասմունքի ունկնդրումը, կոլեկտիվ կինոդիտումները և այլն։

Շատ դպրոցներում մշակվել է ավանդույթ, որի համաձայն համադպրոցական միջոցառումներ են արվել Տյառընդառաջի, Սուրբ Զատիկի տոներին։ Այստեղ ահա կապն ապահովվում է միանգամից մի քանի առարկաների միջև՝ տեխնոլոգիա, հայոց եկեղեցու պատմություն, երաժշտություն, գրականություն, պարարվեստ և այլն։

Եզրակացություն

Անհերքելի է, որ ուսուցման ընթացքում որքան շատ զգայարաններ են մասնակցում, այնքան արդյունավետ է ընթանում այն, իսկ որքան արդյունավետ է ուսուցումը, այնքան հաստատուն են նրանից ստացած գիտելիքներն ու հմտություններ: Այս առումով մենք՝ ուսուցիչներս, աշխատում ենք մատուցվող նյութը դարձնել հնարավորինս տեսանելի, շոշափելի: Այս դեպքում ահա անվիճելի է միջառարկայական կապերի օգտագործման պահանջը, ինչը և պետական չափորոշիչներով պահանջվում է արդի ուսուցման գործընթացում:

Առաջարկություն

Միջառարկայական կապ ստեղծելու համար կարևորվում են զննական պարագաների առկայությունը: Օրինակ՝ Դերենիկ Դեմիրճյանի <<Վարդանանք>> կամ Եղիշեի պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուսումնասիրել Խանջյանի <<Վարդանանքը>>: Ուրեմն մյուս պատմական գործերն ուսումնասիրելիս (Աբովյան <<Վերք Հայաստանի>>, Ռաֆֆի <<Խենթը>> և այլն) անհրաժեշտ են նկարներ, պլակատներ:

Աշխարհագրության և պատմության հետ միջառարկայական կապ ստեղծելու նպատակով կարևորում եմ քարտեզների ու պլակատների առկայությունը, որոնք կմատնանշեն միջառարկայական կապը:

Ուսուցչի ձեռքի տակ պետք է լինի համապատասխան գրականություն՝ հատկապես ժամանակակից դասերին օգնող և խթանող:

Եվ իհարկե այնքան ՏՀՏ միջոցներ պետք է ունենա յուրաքանչյուր դասարան, որ ուսուցիչը ստիպված չլինի դասն անցկացնել համակարգչային կաբինետում:

ԿԳՄՍ նախարարության նախաձեռնած գործընթացը, որի շրջանակներում սովորողներին բաժանվում էին անվճար տոմսեր՝ թանգարաններ, համերգասրահ և թատրոն գնալու համար, հրաշալի էր: Եթե այն շարունակական լինի, դրանից մեծապես կշահեն հատկապես մարզերում ապրող աշակերտները:

Օգտագործված գրականության ցանկ

1) <<Հայոց լեզու և գրականություն>> ամսագիր
2) Բ. Սարուխանյան <<Միջառարկայական և ներառարկայական կապերը ձևաբանության ուսուցման ընթացքում>>, Երևան, 1986
3) Ա. Հովհաննիսյան <<Աշակերտի որոնողական ունակությունների զարգացում>>